

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏ

**Ստանդարտացումը Հայաստանի Հանրապետությունում
Հիմնական դրույթներ**



ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԵՐԵՎԱՆ

Նախաբան

Հայաստանի Հանրապետությունում ստանդարտացման ազգային համակարգի հիմնական սկզբունքները և աշխատանքների կատարման կարգը սահմանված են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն ստանդարտով:

Տեղեկություններ ստանդարտի մասին

1 ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎԵԼ Է Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲԸ կողմից

2 ԸՆԴՈՒՆՎԵԼ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ Է Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲԸ-ի «Ստանդարտացում» ստանդարտացման աշխատանքային կողմից:

3 ՀԱՍՏԱՏՎԵԼ և ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ Է ԴՐՎԵԼ Հայաստանի Հանրապետության ստանդարտացման ազգային մարմնի ղեկավարի 2013 թվականի նոյեմբերի 28-ի N 57/1-Վ հրամանով

4 ԳՐԱՆՑՎԵԼ Է Հայաստանի Հանրապետության ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի գրանցամատյանում, N 1130-2013 առ 28.11.2013թ.

5 Սույն ստանդարտում իրացված են «Ստանդարտացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթները

5 ՀԱՍ 1.0-2006 ստանդարտի փոխարեն

Սույն ստանդարտի ուղղումների և փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաև ուղղումների և փոփոխությունների տեքստերը հրատարակվում են «Ստանդարտներ և տեխնիկական պայմաններ» տեղեկատվության մեջ: Սույն ստանդարտի վերանայման կամ չեղյալ հայտարարման դեպքում համապատասխան տեղեկատվությունը կհրատարակվի նշված տեղեկատվության մեջ: Ուղղումների, փոփոխությունների, վերանայման կամ չեղյալ հայտարարման վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը, ինչպես նաև ուղղումների և փոփոխությունների նախագծերի տեքստերը տեղադրվում են նաև ընդհանուր օգտագործման տեղեկատվական համակարգում՝ Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲԸ-ի ինտերնետային կայքում (www.sarm.am):

Սույն ստանդարտը չի կարելի լրիվ կամ մասնակիորեն վերարտադրել, բազմացնել և տարածել որպես պաշտոնական հրատարակություն առանց ՀՀ էկոնոմիկայի նախարարության Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲԸ-ի թույլտվության

Բովանդակություն

1 Կիրառման ոլորտը.....	1
2 Նորմատիվ վկայակոչումները	1
3 Սահմանումները.....	2
4 Ստանդարտացման հիմնական նպատակները, զարգացման ռազմավարական ուղղությունները և խնդիրները	2
5 Ստանդարտացման սկզբունքները	4
6 Ստանդարտացման օբյեկտները և ստանդարտների տեսակները	7
7 Ստանդարտացման աշխատանքների կազմակերպումը.....	9
8 Ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերը և դրանց ներկայացվող պահանջները.....	14
9 Նորմատիվ փաստաթղթերի կիրառումը.....	18
10 Տեղեկատվություն նորմատիվ փաստաթղթերի մասին, դրանց հրատարակումը և իրացումը	21
11 Ստանդարտացման բնագավառում միջազգային համագործակցությունը.....	22
Մատենագիտություն	24

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏ

Ստանդարտացումը Հայաստանի Հանրապետությունում

Հիմնական դրույթներ

Стандартизация в Республике Армения

Основные положения

Standardization in the Republic of Armenia

Basic provisions

Գործարկման թվականը 01.01.2014

1 Կիրառման ոլորտը

Սույն ստանդարտը սահմանում է Հայաստանի Հանրապետությունում ստանդարտացման կազմակերպման և վարման փոխկապակցված կանոններ և դրույթներ:

Սույն ստանդարտով սահմանված դրույթները կիրառելի են պետական մարմինների, իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատերերի և ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովների կողմից:

2 Նորմատիվ վկայակոչումները

Սույն ստանդարտում վկայակոչված են հետևյալ ստանդարտները.

ՀԱՍ 1.1-2005 Ստանդարտացման ազգային համակարգ. Տերմիններ և սահմանումներ

ՀԱՍ 1.2-2013 Ստանդարտացման ազգային համակարգ. Ազգային ստանդարտների մշակման կարգ

ՀԱՍ 1.4-2001 Ստանդարտացման ազգային համակարգ. Կազմակերպության ստանդարտներ. Հիմնական դրույթներ

ՀԱՍ 1.5-2013 Ստանդարտացման ազգային համակարգ. Ստանդարտներ. Կառուցվածքին, շարադրմանը, ձևավորմանը և բովանդակությանը ներկայացվող ընդհանուր պահանջներ

ՀԱՍ 1.6-2006 Ստանդարտացման ազգային համակարգ. Միջազգային և տարածաշրջանային ստանդարտները որպես ազգային ստանդարտներ ընդունման կանոններ և մեթոդներ

ՀԱՍ 1.11-2002 Ստանդարտացման ազգային համակարգ. Միջպետական ստանդարտների մշակման և կիրառման կարգը

ՀԱՏ 1.0-2013

ՀԱՏ 2.11-98 Կոնստրուկտորական փաստաթղթերի միասնական համակարգ. Տեխնիկական պայմաններ. Կառուցման և շարադրման կանոններ

ՀԱՏ 6.01.1-98 Տեխնիկատնտեսական և սոցիալական տեղեկատվության դասակարգման և կոդավորման միասնական համակարգ. Հիմնական դրույթներ

ՀԱՏ 6.01.2-98 Տեխնիկատնտեսական և սոցիալական տեղեկատվության դասակարգման և կոդավորման միասնական համակարգ. Դասակարգիչների մշակման կարգը

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Սույն ստանդարտից օգտվելիս նպատակահարմար է ստուգել վկայակոչված ստանդարտների գործելը ըստ ընթացիկ տարվա հունվարի 1-ի դրությամբ կազմված ստանդարտների համապատասխան կատալոգների և ընթացիկ տարում հրատարակված համապատասխան տեղեկատուների: Եթե վկայակոչված փաստաթուղթը փոխարինված է (փոփոխված է), ապա սույն ստանդարտից օգտվելիս պետք է ղեկավարվել փոխարինված (փոփոխված) ստանդարտով: Եթե վկայակոչված փաստաթուղթը չեղյալ է հայտարարված առանց փոխարինման, ապա այն դրույթը, որում վկայակոչված է այդ ստանդարտը կիրառվում է այն մասով, որը չի շոշափում այդ վկայակոչումը:

3 Սահմանումները

Սույն ստանդարտում կիրառվում են տերմիններ համապատասխան սահմանումներով ըստ ՀԱՏ 1.1 ստանդարտի:

4 Ստանդարտացման հիմնական նպատակները, զարգացման ռազմավարական ուղղությունները և խնդիրները

4.1 Հայաստանի Հանրապետությունում ստանդարտացման աշխատանքներն իրականացվում են հետևյալ նպատակներն հասնելու համար.

1) արտադրանքի, ծառայությունների և գործընթացների անվտանգության մակարդակի բարելավումը, մարդկանց առողջության ու կյանքի և շրջակա միջավայրի պաշտպանությունը.

2) արտադրանքների, գործընթացների և ծառայությունների որակի բարձրացման խթանումը.

3) աշխատուժի, նյութերի և էներգիայի արդյունավետ օգտագործման երաշխավորումը.

4) արտադրության, բազմագործառույթային կառավարման արդյունավետության բարձրացումը, համատեղելիության և համափոխարինելիության երաշխավորումը.

5) միջազգային առևտրում տեխնիկական խոչընդոտների վերացումը.

6) գիտատեխնիկական առաջընթացի և նորարարության խթանումը.

7) չափումների միասնականության ապահովումը.

8) պետության պաշտպանության ապահովումը.

9) տեխնիկական կանոնակարգերի պահանջների պահպանումը:

©SARM-Բոլոր իրավունքները պաշտպանված են

4.2 Ստանդարտացման ռազմավարական ուղղություններն են.

- ստանդարտացման ազգային համակարգի ձևավորումը և վարումը միջազգային պահանջներին համապատասխան,
- Հայաստանի Հանրապետության տնտեսության ճյուղերի գերակա ուղղություններում ստանդարտացման աշխատանքների իրականացում,
- ազգային ստանդարտների մշակում՝ հիմնված միջազգային և տարածաշրջանային (եվրոպական, միջպետական) ստանդարտների վրա,
- միջազգային և տարածաշրջանային (եվրոպական, միջպետական) ստանդարտների ուղղակի կիրառում,
- ստանդարտացման աշխատանքների իրականացում նորարարական տեխնոլոգիաների ներդրման համար,
- ազգային ստանդարտների ֆոնդի համապատասխանեցումը տնտեսության գերակայող ճյուղերի արդի պահանջներին,
- ստանդարտացման աշխատանքների իրականացում տարածաշրջանային (միջպետական, եվրոպական) տեխնիկական կանոնակարգերի պահանջները պահպանելու համար:

4.3 Ստանդարտացման հիմնական խնդիրներն են.

- շահագրգիռ կողմերի (արտադրանք մշակող, արտադրող, վաճառող, ներմուծող (պատվիրատու) կազմակերպությունների) միջև փոխըմբռնման ապահովումը,
- արտադրանքի (ծառայության) համապատասխանության գնահատման գործընթացների ապահովումը,
- ազգային ստանդարտների մշակում տեխնիկական կանոնակարգերի պահանջների պահպանումն ապահովելու համար,
- միօրինականացման (ունիֆիկացման) աշխատանքների կատարմանը նպաստումը,
- նյութատարության, էներգատարության և աշխատատարության իջեցման համար անթափոն տեխնոլոգիաների կիրառման ապահովումը,
- չափագիտական նորմերի, կանոնների, դրույթների և պահանջների սահմանումը,
- կառավարման համակարգերի ստեղծումը և վարումը,
- տեխնիկատնտեսական տեղեկատվության դասակարգման և կոդավորման համակարգերի ստեղծումն ու վարումը,
- արտադրանքի (ծառայությունների, աշխատանքի) միասնական պահանջների սահմանումը,

ՀԱՏ 1.0-2013

- տնտեսության համապատասխան ոլորտներում պետական սոցիալ-տնտեսական և գիտատեխնիկական ծրագրերի նորմատիվ բազայի ապահովում,
- արտադրանքի փորձարկման, վերահսկման ներդաշնակեցված միասնական մեթոդների սահմանումը:

5 Ստանդարտացման սկզբունքները

5.1 Ստանդարտների առկայությունն անհրաժեշտ է ապահովելու վստահելի հիմք, որտեղ ընդհանուր սպասելիքները կարող են արտահայտվել արտադրանքի, ծառայության կամ գործընթացի բնութագրերում:

5.2 Ստանդարտացման հիմնական սկզբունքներն են՝

- ազգային ստանդարտների մշակման, ընդունման և կամավոր կիրառման գործընթացում բոլոր շահագրգիռ կողմերի կամավոր և հավասար մասնակցության իրավունքի պահպանում,
- շահագրգիռ կողմերի փոխհամաձայնության վրա հիմնված ազգային ստանդարտների մշակում և ընդունում,
- ստանդարտացման գործընթացի բոլոր փուլերում աշխատանքների թափանցիկություն և պատշաճ հանրային իրազեկում,
- ստանդարտացման գործընթացում շահագրգիռ կողմերի համընդհանուր շահերի նկատմամբ որևէ անձնական շահի գերիշխման կանխարգելում,
- ազգային ստանդարտների համապատասխանություն միմյանց և Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը,
- գիտության և տեխնոլոգիայի համաշխարհային նորարարական, առաջադիմական նվաճումների միջազգային (այդ թվում՝ եվրոպական) ստանդարտացման կանոնների և արդյունքների հաշվի առնում,
- միջազգային և տարածաշրջանային ստանդարտներին ներդաշնակ ազգային ստանդարտների մշակում՝ հաշվի առնելով աշխարհագրական, կլիմայական և հիմնարար տեխնոլոգիական բնույթի տարբերությունների առկայությունը,
- գործողության մեջ դրված ազգային ստանդարտների և դրանց փոփոխությունների պատշաճ ծանուցում բոլոր շահագրգիռ կողմերին,
- ստանդարտացման աշխատանքների իրականացում տեխնիկական հանձնաժողովների միջոցով:

5.3 Ազգային ստանդարտները կամավոր են, քանի որ չկա որևէ պարտավորություն դրանք կիրառելու կամ դրանց համապատասխանելու համար, բացառությամբ որոշ դեպքերի, երբ դրանց կիրառումը պահանջվում է իրավական նորմատիվ ակտերով, մասնավորապես ազգային ստանդարտները օրենքներում և տեխնիկական կանոնակարգերում վկայակոչելու դեպքում: Ստանդարտները միջոցներ են նրանց հարմարավետության համար, որոնք

©SARM-Բոլոր իրավունքները պաշտպանված են

ցանկանում են կիրառել դրանք: Որոշ դեպքերում երրորդ կողմը կարող է ազդեցություն ունենալ ստանդարտը կիրառելու համար որպես առևտրային անհրաժեշտություն, սակայն Ստանդարտացման ազգային մարմինը չի կարող հսկել այդ գործողությունները և դրա մաս չի հանդիսանում:

5.4 Ստանդարտների ազգային ինստիտուտի պարտավորություններից է ստանդարտացման գործընթացի թափանցիկության և հաշվետվողականության ապահովումը՝ տեխնիկական հանձնաժողովների համար ապահովելով անհրաժեշտ փաստաթղթերի առկայությունը ստանդարտների մշակման գործընթացում: Ազգային ստանդարտների մշակման գործընթացների թափանցիկությունը պետք է ապահովվի բոլոր փուլերում՝ սկսած ծրագրի կազմումից, մշակումից մինչև ստանդարտի ընդունումը: Դրան հասնում են՝

- ազգային ստանդարտների մշակման ծրագրերի և դրանց մշակման, հրապարակային քննարկման ավարտի և հաստատման վերաբերյալ ծանուցումների հրապարակմամբ,
- ազգային ստանդարտների նախագծերի քննարկման հրապարակայնությամբ,
- ստանդարտների բոլոր նախագծերի պարտադիր փորձաքննության միջոցով ազգային ստանդարտների մշակման ու հաստատման կանոնների միասնականությամբ և ոչ հակասականությամբ:

Ազգային ստանդարտների մշակումը պետք է կատարվի թափանցիկ՝ այս կամ այն օբյեկտի ստանդարտացման մեջ շահագրգիռ առավել իրազեկ իրավաբանական և (կամ) ֆիզիկական անձանց կամավոր հիմունքներով միավորող ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովների մասնակցությամբ:

5.5 Միջազգային և տարածաշրջանային ստանդարտներն արտացոլում են աշխարհի տնտեսապես զարգացած երկրների առաջավոր փորձը, գիտական հետազոտությունների արդյունքները, սպառողների լայն շրջանի և պետական մարմինների պահանջները և իրենցից ներկայացնում են կանոններ, ընդհանուր սկզբունքներ կամ երկրների մեծամասնության համար բնութագրեր, այդ պատճառով ազգային ստանդարտներ մշակելու ժամանակ միջազգային (տարածաշրջանային) ստանդարտների կիրառումը դառնում է հայրենական արտադրանքը համաշխարհային շուկա դուրս բերելու կարևորագույն պայմաններից մեկը:

Ազգային ստանդարտների մշակման ժամանակ որպես հիմք ընդունվում են գործող և մշակման վերջին փուլում գտնվող միջազգային ստանդարտներն ամբողջությամբ կամ մասամբ, այն չափով, որքանով դրանք համապատասխանում են 4.1 կետով սահմանված պահանջների կատարմանը՝ հաշվի առնելով աշխարհագրական, կլիմայական և հիմնարար տեխնոլոգիական բնույթի տարբերությունները, առանձնահատկությունները, կամ Հայաստանի Հանրապետությունը, միջազգային գործելակարգով սահմանված գործընթացներին համապատասխան, դեմ է քվեարկել միջազգային ստանդարտին:

5.6 Ազգային ստանդարտները պետք է ընդունվեն էական հարցերի վերաբերյալ լուրջ առարկությունների բացակայության դեպքում, այսինքն՝ ընդհանուր փոխհամաձայնությամբ:

ՀԱՏ 1.0-2013

Դրան հասնում են ստանդարտի նախագծի հրապարակային քննարկման արդյունքում, որի ժամանակ հաշվի են առնվում բոլոր կողմերի կարծիքներն ու դիտողությունները, քանի որ քննարկմանը մասնակցող կողմերն ունեն հավասար իրավունքներ և մոտեցվում են չհամընկնող կարծիքները:

5.7 Ազգային ստանդարտների մշակման նպատակահարմարությունը որոշվում է հաշվի առնելով դրանց սոցիալական, տնտեսական և տեխնիկական կարևորությունն ու կիրառման համար ընդունելիությունը, որոնք կարող են իրենց հերթին պայմանավորված լինել տեխնիկական կանոնակարգերի ընդունմամբ: Ազգային ստանդարտի մշակման մասին որոշում ընդունելուց առաջ պետք է գնահատվի ստանդարտացման համապատասխան օբյեկտի վրա տարածվող միջազգային և տարածաշրջանային ստանդարտների կիրառման հնարավորությունը Հայաստանի Հանրապետությունում:

5.8 Ազգային ստանդարտների շարադրանքը պետք է լինի պարզ և հստակ, իսկ դրանց պահանջների միանշանակությունն ապահովվելու համար՝

- մշակվող ստանդարտների բովանդակությունը չպետք է կրկնի փոխկապված գործող իրավական ակտերի, տեխնիկական կանոնակարգերի և ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի պահանջները և հակասի դրանց,

- ազգային ստանդարտներում պետք է տրվեն տեղեկություններ տեխնիկական կանոնակարգերի մասին, որոնց կատարումն ապահովվում է տվյալ ազգային ստանդարտի պահանջների պահպանման դեպքում,

- ընդունված ստանդարտները պետք է պիտանի լինեն համապատասխանության գնահատման համար, այդ թվում՝ համապատասխանության հավաստման աշխատանքների կատարման համար:

5.9 Չի թույլատրվում գործառնական նշանակությամբ ստանդարտացման նույնական օբյեկտների համար ստանդարտների մշակման կրկնությունը:

5.10 Ազգային ստանդարտների պահանջները պետք է սահմանվեն գիտության, տեխնոլոգիայի և գործնական փորձի ժամանակակից նվաճումների կիրառման հիման վրա՝ հաշվի առնելով միջազգային ստանդարտների կամ դրանց նախագծերի վերջին խմբագրությունը և պետք է ապահովեն կարգավորման օպտիմալ մակարդակն ու որոշակի բնագավառում առավելագույն հնարավոր արդյունավետությունը՝ չկասեցնելով ստանդարտից օգտվողների նախաձեռնությունը նոր տեսակի արտադրանքի, ծառայության և գործընթացների յուրացման գործում:

5.11 Ստանդարտացման աշխատանքների կատարման ժամանակ անհրաժեշտ է ապահովել ինչպես ստանդարտացման օբյեկտի և դրա բաղադրիչ մասերի, այնպես էլ ստանդարտացման օբյեկտի վրա ազդող նյութական և ոչ նյութական գործոնների նկատմամբ փոխկապակցված պահանջների համակարգի նպատակային և պլանաչափ սահմանումը և կիրառումը՝ դրանց ցուցանիշների, նորմերի և պահանջների համապատասխանեցման և փոխկապակցման ճանապարհով:

5.12 Ստանդարտներով սահմանված պահանջները Առևտրի համաշխարհային կազմակերպության անդամ ցանկացած պետության տարածքում արտադրվող արտադրանքի համար պետք է ապահովեն ոչ պակաս նպաստավոր պայմաններ, քան նմանատիպ հայրենական արտադրանքի կամ ցանկացած այլ պետությունում թողարկվող արտադրանքի համար:

5.13 Ստանդարտները մշակվում, ընդունվում և կիրառվում են այնպես, որ չստեղծեն լրացուցիչ խոչընդոտներ միջազգային առևտրում:

6 Ստանդարտացման օբյեկտները և ստանդարտների տեսակները

6.1 Ստանդարտացման օբյեկտներն են արտադրանքը, աշխատանքը (այդ թվում՝ գործընթացը) և ծառայությունը:

6.2 Ստանդարտացման օբյեկտներն ընդգրկում են.

ա) կազմակերպամեթոդական և ընդհանուր տեխնիկական նորմեր և պահանջներ, այդ թվում՝

- ստանդարտացման, չափումների միասնականության ապահովման և համապատասխանության գնահատման աշխատանքների հետ կապված գործընթացների կազմակերպումը,

- տեխնիկատնտեսական և սոցիալական տեղեկատվության դասակարգումը և կոդավորումը,

- ստանդարտների մշակման ժամանակ օգտագործվող տերմինները և սահմանումները,

- արտադրանքի մշակման, արտադրման և կիրառման ժամանակ օգտագործվող միասնական տեխնիկական լեզուն, տեղեկատվական տեխնոլոգիաների ծրագրավորման և տեխնիկական համատեղման միջոցները, տեխնիկական փաստաթղթերը,

- արտադրանքին ներկայացվող անվտանգության պահանջները, այդ պահանջների կատարումն ապահովող ընդհանուր տեխնիկական նորմերը և կանոնները,

բ) բազմակի վերարտադրվող և օգտագործվող արտադրանքը, աշխատանքները (գործընթացները) և ծառայությունները,

գ) պետական սոցիալ-տնտեսական և գիտատեխնիկական ծրագրերի օբյեկտները:

6.3 Ստանդարտների տեսակները

6.3.1 Կախված ստանդարտացման օբյեկտի առանձնահատկությունից և դրա նկատմամբ սահմանվող պահանջների բովանդակությունից, մշակվում են ստանդարտների հետևյալ տեսակները՝

- հիմնադրական ստանդարտներ (կազմակերպամեթոդական և ընդհանուր տեխնիկական),

- արտադրանքի ստանդարտներ,

ՀԱՏ 1.0-2013

- ծառայությունների ստանդարտներ,
- աշխատանքների (գործընթացների, արտադրանքի արտադրման, շահագործման, պահման, փոխադրման, իրացման, օգտահանման) ստանդարտներ,
- տերմինների և սահմանումների ստանդարտներ,
- վերահսկման (փորձարկումների, չափումների, վերլուծության) մեթոդների ստանդարտներ

6.3.2 Հիմնադրական ստանդարտներով սահմանվում են գործունեության որոշակի բնագավառի համար ընդհանուր կազմակերպամեթոդական դրույթներ, ինչպես նաև ընդհանուր տեխնիկական պահանջներ (նորմեր և կանոններ), որոնք կապահովեն արտադրանքի ստեղծման և օգտագործման գործընթացներում համատեղելիությունը և համափոխարինելիությունը, գիտության, տեխնիկայի և արտադրության տարբեր բնագավառների տեխնիկական միասնությունն ու փոխկապակցվածությունը, շրջակա միջավայրի պահպանությունը, մարդու կյանքի և առողջության, ֆիզիկական և իրավաբանական անձանց ու պետական գույքի, կենդանիների և բույսերի կյանքի, առողջության, շրջակա միջավայրի, այդ թվում՝ կենդանական և բուսական աշխարհի անվտանգությունը և ազգային ուղղվածությունն ապահովող այլ ընդհանուր տեխնիկական պահանջներ

6.3.3 Արտադրանքի ստանդարտներով սահմանվում են համասեռ արտադրանքի խմբերին կամ որոշակի արտադրանքին ներկայացվող պահանջներ և դրանց անվտանգության, հիմնական սպառողական հատկությունների վերահսկման մեթոդներ, ինչպես նաև շահագործման պայմաններին ու կարգին, փոխադրմանը, պահմանը և օգտահանմանը ներկայացվող պահանջներ:

6.3.4 Աշխատանքի (գործընթացի) ստանդարտներով սահմանվում են արտադրանքի արտադրության կազմակերպման և շուկայում դրա շրջանառության, ինչպես նաև տարբեր տեսակի աշխատանքների կատարման մեթոդներին (եղանակներին, գործելակարգին, նորմերին) ներկայացվող հիմնական պահանջներ, արտադրանքի մշակման, պատրաստման, փոխադրման, շահագործման, նորոգման և օգտագործման, ինչպես նաև տեխնոլոգիական գործընթացներում այդ պահանջների վերահսկման մեթոդներ:

6.3.5 Ծառայությունների ստանդարտներով սահմանվում են համասեռ ծառայությունների խմբերին կամ որոշակի ծառայությանը ներկայացվող պահանջներ և դրանց վերահսկման մեթոդներ՝ ծառայության մատուցման տեսակի, բովանդակության և ձևի մասով, ինչպես նաև ծառայության որակի վրա էական ազդեցություն ունեցող գործոնների նկատմամբ պահանջներ:

6.3.6 Տերմինների և սահմանումների ստանդարտներով սահմանվում են ստանդարտացման և հարակից բնագավառներում կիրառվող հասկացությունների անվանումներն ու բովանդակությունը:

6.3.7 Վերահսկման մեթոդների ստանդարտներով սահմանվում են արտադրանքի արտադրման, համապատասխանության հավաստման և օգտագործման ժամանակ դրա փորձարկումների, չափումների, վերլուծության մեթոդները (եղանակները, ձևերը, մեթոդիկաները և այլն)

7 Ստանդարտացման աշխատանքների կազմակերպումը

Հայաստանի Հանրապետությունում ստանդարտացման բնագավառում պետական քաղաքականությունը ձևավորում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված պետական կառավարման մարմինը, իսկ ստանդարտացման աշխատանքների կազմակերպումն իրականացնում է ստանդարտացման ազգային մարմինը համաձայն «Հայաստանի Հանրապետությունում ստանդարտացման լիազորված մարմին ու ստանդարտացման ազգային մարմին ճանաչելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի հուլիսի 22-ի N 1038-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հուլիսի 4-ի N 883-Ն որոշման:

Հայաստանի Հանրապետությունում ստանդարտացման գործընթացի մասնակիցներն են լիազորված պետական մարմինը, Ստանդարտացման ազգային մարմինը, տեխնիկական կառավարման խորհուրդը, ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովները, պետական կառավարման այլ մարմիններ, ինչպես նաև այլ շահագրգիռ կողմեր:

7.1 Լիազորված պետական մարմինը

Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված պետական կառավարման մարմինը՝

- 1) մշակում և ապահովում է ստանդարտացման բնագավառում պետական քաղաքականության իրականացումը,
- 2) ապահովում է պետության կարիքների համար ստանդարտացման աշխատանքների ֆինանսավորումը,
- 3) Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանն է ներկայացնում պետական ստանդարտացման ծրագիրը:

7.2 Ստանդարտացման ազգային մարմինը

7.2.1 Ստանդարտացման ազգային մարմինը՝

- ընդունում և գործողության մեջ է դնում ազգային ստանդարտները.
- դադարեցնում է ազգային ստանդարտների գործողությունը.
- հաստատում և հրապարակում է ստանդարտացման ամենամյա ծրագիրը.
- ստանդարտացման ազգային համակարգի ստանդարտներով սահմանում է ստանդարտացման աշխատանքների կատարման կազմակերպամեթոդական և ընդհանուր տեխնիկական կանոնները, ընթացակարգերը, ինչպես նաև միջազգային, տարածաշրջանային

ՀԱՏ 1.0-2013

ստանդարտների և այլ պետությունների ազգային ստանդարտների կիրառման կարգը ազգային ստանդարտների կարգավիճակով՝ ստանդարտացման ոլորտում Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններին համապատասխան.

- ստեղծում է ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովներ և համակարգում դրանց գործունեությունը.

- ներկայացնում է Հայաստանի Հանրապետությունը ստանդարտացման միջազգային կազմակերպություններում.

- մասնակցում է միջազգային և տարածաշրջանային ստանդարտացման աշխատանքներին.

- ստեղծում և վարում է ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի ազգային ֆոնդը.

- իր ուսումնական կենտրոնի միջոցով իրականացնում է տեխնիկական կանոնակարգման, ստանդարտացման, չափագիտության և համապատասխանության գնահատման բնագավառներում մասնագետների ուսուցում և վերապատրաստում.

- իրականացնում է ազգային, միջազգային, տարածաշրջանային ստանդարտների, ստանդարտացման բնագավառի կանոնների և ուղեցույցների, դրանց փոփոխությունների գրանցումը (հաշվառումը) և պատասխանատվություն է կրում դրանց պահպանման համար.

- ապահովում է միջազգային, տարածաշրջանային և ազգային մակարդակներով ստանդարտացման բնագավառում տեղեկատվության փոխանակումը.

- մատուցում է տեղեկատվական ծառայություններ.

- կազմակերպում է ազգային, միջազգային և տարածաշրջանային ստանդարտների, կանոնների, ուղեցույցների, ինչպես նաև ամենամյա կատալոգների և եռամսյակային տեղեկատուների հրատարակումը և տարածումը.

- կազմակերպում է միջազգային և տարածաշրջանային ստանդարտների փորձաքննություն.

- կանոնակարգող մարմնի հանձնարարությամբ նախապատրաստում և հրատարակում է տեխնիկական կանոնակարգերի պահանջների պահպանումն ապահովող ստանդարտների ցանկը.

- գործում է՝ ելնելով Հայաստանի Հանրապետության ստանդարտացման ազգային շահերից.

- ապահովում է ստանդարտացման միջազգային և տարածաշրջանային այն կազմակերպությունների կանոնների և պարտավորությունների կատարումը, որոնց անդամակցում է Հայաստանի Հանրապետությունը:

7.3 Կառավարման խորհուրդը

7.3.1 Կառավարման խորհուրդը Ստանդարտացման ազգային մարմնի կառավարման մարմինն է, որը կազմված է Խորհրդի նախագահից, 10 անդամներից՝ ստանդարտացման գերակա ոլորտներում ներգրավված շահագրգիռ 5 պետական կառավարման մարմինների և 5 ոչ պետական կազմակերպությունների ներկայացուցիչներից:

7.3.2 Խորհրդի անհատական կազմը սահմանում է լիազորված պետական կառավարման մարմինը:

7.3.3 Ստանդարտացման ազգային մարմնի տնօրենը Խորհրդի քարտուղարն է և չի կարող հանդես գալ որպես Խորհրդի նախագահ:

7.3.4 Խորհրդի նիստն իրավազոր է, եթե ներկա է քվեարկության ձայնի իրավունք ունեցող Խորհրդի անդամների առնվազն 2/3-ը:

7.3.5 Խորհրդի նախագահը ընտրվում է Խորհրդի անդամների կողմից:

7.3.6 Խորհրդի նիստերը հրավիրվում են ըստ անհրաժեշտության, բայց ոչ ուշ, քան եռամսյակը մեկ անգամ:

7.3.7 Խորհրդի նիստերի որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Նիստին ներկա անդամների ձայների հավասարության դեպքում Խորհրդի նախագահի ձայնը վճռորոշ է:

7.3.8 Խորհուրդը՝

- ընդունում է որոշումներ Ստանդարտացման ազգային մարմնի գործունեության պլանավորման և գործունեության հետ կապված խնդիրների կանոնակարգման վերաբերյալ.
- հաստատում է Ստանդարտացման ազգային մարմնի աշխատանքային ծրագրերը և հեռանկարային գործունեության հնգամյա ռազմավարությունները.
- ստեղծում է աշխատանքային խմբեր՝ Ստանդարտացման ազգային մարմնի գործունեության հետ կապված հարցերի ուսումնասիրության և համապատասխան որոշումների նախապատրաստման համար.
- դիմում է շահագրգիռ կողմերին՝ տարբեր հարցերի շուրջ կարծիք արտահայտելու առաջարկով.
- քննարկում է Ստանդարտացման ազգային մարմնի հաջորդ տարվա բյուջեի նախագիծը և ներկայացնում է առաջարկություն՝ այն լիազորված պետական կառավարման մարմնի հաստատմանը ներկայացնելու վերաբերյալ.
- քննարկում, հաստատում և հրապարակում է Ստանդարտացման ազգային մարմնի գործունեության տարեկան արդյունքները.
- սահմանում է ստանդարտացման բնագավառում պետական քաղաքականության իրականացման հեռանկարային ռազմավարությունը.
- համապատասխան շահագրգիռ մարմինների և ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովների առաջարկությունների հիման վրա ընդունում է ստանդարտացման ամենամյա ծրագիրը.

ՀԱՏ 1.0-2013

- ապահովում է ստանդարտացման ազգային համակարգի համապատասխանությունն ազգային տնտեսության շահերին, նյութատեխնիկական բազայի ներկա վիճակին և գիտատեխնիկական առաջընթացին.

- առաջարկություն է ներկայացնում ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովների ստեղծման, լուծարման, դրանց կանոնադրության և աշխատանքային ծրագրերի ընդունման վերաբերյալ, համակարգում և իրականացնում է դրանց գործունեության մշտադիտարկումը, ինչպես նաև մեթոդական ղեկավարումը.

- համակարգում է Հայաստանի Հանրապետությունում ազգային, միջազգային և տարածաշրջանային ստանդարտացման աշխատանքները՝ այդ աշխատանքների կատարմանը ներգրավելով շահագրգիռ կողմերին, ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովներին և համապատասխան փորձագետներին.

- հաստատում, հրապարակում և լիազորված պետական կառավարման մարմին է ներկայացնում հաշվետվություն Հայաստանի Հանրապետության ստանդարտացման ամենամյա ծրագրի կատարման վերաբերյալ.

- իրականացնում է Ստանդարտացման ազգային մարմնի կանոնադրությամբ Խորհրդին վերապահված այլ լիազորություններ:

7.4 Ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովները

7.4.1 Ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովները ստեղծվում են Ստանդարտացման ազգային մարմնին կից ամրագրված գործունեության բնագավառում ազգային, միջազգային, տարածաշրջանային, միջպետական ստանդարտացման աշխատանքների կատարման համար՝ հաշվի առնելով ստանդարտացման միջազգային և տարածաշրջանային տեխնիկական հանձնաժողովների գործունեության ուղղությունները:

Տեխնիկական հանձնաժողովի ստեղծումը, անդամակցությունը և տեխնիկական հանձնաժողովի կազմից դուրս գալն իրականացվում է ստանդարտացման ազգային մարմնի ղեկավարի հրամանով:

Տեխնիկական հանձնաժողովի ղեկավարում է նախագահը, որն ընտրվում է հանձնաժողովի անդամների կողմից բաց քվեարկությամբ՝ ձայների մեծամասնությամբ:

Ընթացիկ աշխատանքը կազմակերպելու համար տեխնիկական հանձնաժողովի կազմում ստեղծվում է քարտուղարություն և նշանակվում է պատասխանատու քարտուղար: Քարտուղարությունը վարում է Ստանդարտացման ազգային մարմինը:

Ստանդարտների մշակման համար տեխնիկական հանձնաժողովի կառուցվածքում կարող են ստեղծվել առավել մասնագիտացված խմբեր, որոնց գործունեությունը համակարգում է Ստանդարտացման ազգային մարմինը:

Տեխնիկական հանձնաժողովի գործունեության ոլորտը, կառուցվածքը, ինչպես նաև տեխնիկական հանձնաժողովի նախագահի, քարտուղարի և անդամ կազմակերպությունների լիազոր ներկայացուցիչների հիմնական գործառույթները սահմանվում է տեխնիկական հանձնաժողովի կանոնադրությամբ, որը հաստատում է տեխնիկական հանձնաժողովի նախագահը:

Տեխնիկական հանձնաժողովները չունեն իրավաբանական անձի կարգավիճակ:

©SARM-Բոլոր իրավունքները պաշտպանված են

7.4.2 Ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովների կազմում ստանդարտացման ոլորտում իրենց շահերի նյութականացման նպատակով հավասարության և կամավորության հիմունքներով ընդգրկվում են Ստանդարտացման ազգային մարմնի, պետական կառավարման մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, գիտահետազոտական ինստիտուտների, արհեստակցական միությունների, հասարակական կազմակերպությունների (միությունների), ձեռնարկատերերի ու սպառողների միավորումների, առևտրային ու ոչ առևտրային կազմակերպությունների ներկայացուցիչներ, ինչպես նաև ֆիզիկական անձինք:

7.4.3 Ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովն ամրագրված գործունեության ոլորտին համապատասխան՝

1) ընդունում է ազգային ստանդարտների, ստանդարտացման կանոնների և ուղեցույցների նախագծերը և առաջարկություն ներկայացնում դրանք գործողության մեջ դնելու վերաբերյալ.

2) իրականացնում է ազգային, միջազգային և տարածաշրջանային ստանդարտների և դրանց փոփոխությունների մշակումը, ինչպես նաև նախապատրաստում է առաջարկություններ դրանց վերանայման, գործողության դադարեցման վերաբերյալ.

3) անցկացնում է միջազգային, տարածաշրջանային, ազգային ստանդարտների և դրանց փոփոխությունների նախագծերի փորձաքննություն.

4) մասնակցում է ստանդարտացման ծրագրերի ձևավորմանը.

5) մասնակցում է ստանդարտացման միջազգային և տարածաշրջանային տեխնիկական հանձնաժողովների (ենթահանձնաժողովների, աշխատանքային խմբերի) աշխատանքներին, նրանց քարտուղարությունների վարմանը՝ Ստանդարտացման ազգային մարմնի և ստանդարտացման միջազգային (տարածաշրջանային) կազմակերպությունների միջև կնքված համաձայնագրերին համապատասխան.

6) կազմակերպում և իրականացնում է ամրագրված գործունեության բնագավառում ստանդարտացման փաստաթղթերի փորձաքննություն՝ գիտության և տեխնիկայի արդի նվաճումներին համապատասխան՝ հաշվի առնելով ազգային տնտեսության վիճակը.

7) իրականացնում է իր կանոնադրությամբ և աշխատանքային ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ:

Տեխնիկական հանձնաժողովների աշխատանքների համակարգումը և մեթոդական ղեկավարումն իրականացնում է Ստանդարտացման ազգային մարմինը:

7.4.4 Համապատասխան ոլորտում գործող տեխնիկական հանձնաժողովի բացակայության դեպքում ստանդարտի մշակման համար ստեղծվում է շահագրգիռ կողմերից բաղկացած աշխատանքային խումբ, որն իրականացնում է 4.2.3.3 կետով սահմանված գործառույթները:

7.5 Պետական կառավարման մարմինները

ՀԱՏ 1.0-2013

Պետական կառավարման մարմինները ստանդարտացման աշխատանքներն իրականացնում են օրենսդրությամբ սահմանված գործառույթներ՝ իրենց իրավասությունների շրջանակներում

7.6 Ստանդարտացումը կազմակերպություններում

8 Ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերը և դրանց ներկայացվող պահանջները

8.1 Հայաստանի Հանրապետությունում կիրառվող ստանդարտացման փաստաթղթերն են՝

- 1) ազգային ստանդարտները.
- 2) ստանդարտացման կանոնները և ուղեցույցները.
- 3) միջազգային ստանդարտները.
- 4) տարածաշրջանային, այդ թվում՝ եվրոպական և միջպետական ստանդարտները.
- 5) տեխնիկատնտեսական և սոցիալական տեղեկատվության դասակարգիչները.
- 6) կազմակերպության ստանդարտները:

8.1.1 Ազգային ստանդարտները

Ազգային ստանդարտներն են՝

1) Հայաստանի Հանրապետության ստանդարտները, որոնք մշակվում և կիրառվում են հայերենով.

2) ստանդարտացման ազգային համակարգով սահմանված՝ Հայաստանի Հանրապետությունում ազգային ստանդարտի կարգավիճակով կիրառվող միջազգային, տարածաշրջանային և այլ պետությունների ազգային ստանդարտները:

Ազգային ստանդարտներով սահմանվում են պահանջներ և (կամ) նորմեր արտադրանքի, աշխատանքի և ծառայության անվտանգության, տեխնիկական և տեղեկատվական համատեղելիության, արտադրանքի համափոխարինելիության, արտադրանքի սպառողական (շահագործական) հիմնական բնութագրերի, փորձարկման մեթոդների, արտադրանքը փաթեթավորելու, մակնշելու, պահելու, փոխադրելու, օգտագործելու, վերականգնելու (նորոգելու) և օգտահանելու վերաբերյալ, ինչպես նաև դասակարգման օբյեկտների և դրանց ենթաբազմության կոդերի ու անվանումների հավաքածուներ:

Ազգային ստանդարտներով սահմանվում են նաև արտադրանքի մշակման, արտադրման և օգտագործման (շահագործման) տեխնիկական փաստաթղթերի ձևակերպման, արտադրանքի, աշխատանքի և ծառայության որակի ապահովման, միջոցների օգտագործման

պահանջներ, ինչպես նաև տերմիններ, չափագիտական և այլ կազմակերպատեխնիկական և ընդհանուր տեխնիկական կանոններ:

Ազգային ստանդարտների համար կիրառվում է «ՀԱՏ» դասիչը: «Հայաստանի ազգային ստանդարտ» անվանումը և «ՀԱՏ» հապավումը պաշտպանվում են հեղինակային իրավունքների մասին օրենսդրությամբ և չեն կարող կիրառվել այլ տեսակի փաստաթղթերի համար:

Միջազգային, տարածաշրջանային և այլ պետությունների ազգային ստանդարտներն ազգային ստանդարտի կարգավիճակով ընդունվում և կիրառվում են ստանդարտացման ազգային համակարգով սահմանված հավանության և վերահրատարակման մեթոդներով:

Ազգային ստանդարտների մշակումը, համաձայնեցումը, վերանայումը, փոփոխումը և չեղյալ հայտարարումն իրականացվում է ՀԱՏ 1.2 ստանդարտին համապատասխան:

Բոլոր ազգային ստանդարտները.

ա) մշակվում են տեխնիկական հանձնաժողովների կողմից, որոնք անմիջական պատասխանատվություն են կրում ստանդարտի մշակման համար և հասնում են համաձայնության կոնսենսուսի միջոցով,

բ) հանդիսանում են բաց քննարկումների առարկա,

գ) ենթական են պարբերական վերանայման՝ դրանց շարունակական արդիականությունն ապահովելու համար:

8.1.2 Ստանդարտացման կանոնները և ուղեցույցները

8.1.2.1 Հայաստանի Հանրապետությունում ստանդարտացման աշխատանքների կազմակերպման ու համակարգման խնդիրների լուծման նպատակով ստանդարտացման ազգային մարմինը, պետական այլ մարմիններն իրենց իրավասության սահմաններում մշակում և շահագրգիռ կազմակերպությունների հետ քննարկելուց հետո թողարկում են ստանդարտացման կանոններ և ուղեցույցներ:

8.1.2.2 Ստանդարտացման կանոնները մշակվում են հիմնադրական կազմակերպամեթոդական կամ ընդհանուր տեխնիկական ստանդարտներով սահմանված առանձին դրույթները լրացնելու կամ որոշակիացնելու համար, ինչպես նաև կազմակերպամեթոդական ազգային ստանդարտների մշակման աննպատակահարմարության դեպքում, եթե նման փաստաթղթի կիրառման ոլորտը սահմանափակված է միայն ստանդարտացման ազգային մարմնի կառուցվածքային ստորաբաժանումներով:

8.1.2.3 Ստանդարտացման ուղեցույցները մշակվում են դեռևս չկայացած, տիպային չդարձած համապատասխան բնագավառի կազմակերպամեթոդական դրույթների գործնականում նախապես ստուգման անհրաժեշտության դեպքում, այսինքն մինչև այդ դրույթները սահմանող ազգային ստանդարտի ընդունումը:

8.1.2.4 Կանոնները և ուղեցույցները չպետք է կրկնեն ազգային ստանդարտների պահանջները:

ՀՍ 1.0-2013

8.1.2.5 Կանոնների և ուղեցույցների կառուցվածքը, ձևավորումը, բովանդակությունը՝ ըստ ՀՍ 1.5 ստանդարտի:

Կանոնների և ուղեցույցների ընդունման, հաստատման և գործողության մեջ դնելու կարգը համանման է ստանդարտների ընդունման, հաստատման և գործողության մեջ դնելու կարգին:

8.1.2.6 Կանոնները և ուղեցույցները և դրանց փոփոխությունները ենթակա են պետական գրանցման:

Գրանցման ժամանակ կանոններին (ուղեցույցներին) տրվում է նշագիր, որը բաղկացած է՝

- «ԿՆ» («ՈՒՂ») դասիչից,
- գործունեության ուղղության ստանդարտացման համակարգի պայմանական թվային նշագրից (առկայության դեպքում),
- կետով անջատված գրանցման հերթական համարից,
- գծիկով անջատված կանոնների (ուղեցույցի) ընդունման տարեթվի չորս թվանշանից:

Օրինակ՝ ԿՆ 1.1-2005 Ստանդարտացման կանոններ. Ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովների հիմնադրման և գործունեության կարգը:

8.1.3 Միջազգային ստանդարտները

Միջազգային ստանդարտներն ընդունված են ստանդարտացման աշխատանքներով զբաղվող ստանդարտացման միջազգային կազմակերպությունների կողմից և մատչելի են սպառողների լայն շրջանակներին: Ստանդարտացման այսպիսի կազմակերպություններ են Ստանդարտացման միջազգային կազմակերպությունը՝ ԻՍՕ-ն և Միջազգային էլեկտրատեխնիկական հանձնաժողովը՝ ԻԷԿ-ը:

8.1.4 Տարածաշրջանային ստանդարտները

Տարածաշրջանային ստանդարտներն ընդունված են ստանդարտացմամբ զբաղվող ստանդարտացման տարածաշրջանային կազմակերպությունների կողմից և մատչելի են սպառողների լայն շրջանակներին:

Ստանդարտացման այսպիսի կազմակերպություններ են Ստանդարտացման եվրոպական կոմիտեն՝ ՍԵՆ-ը, Էլեկտրատեխնիկայի ստանդարտացման եվրոպական կոմիտեն՝ ՍԵՆԷԼԵԿ-ը, Հեռահաղորդակցության եվրոպական ինստիտուտը՝ ԵՏՄԻ-ն, Ստանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման միջպետական խորհուրդը՝ ՄՊԽ-ն:

Միջպետական ստանդարտները (ԳՕՍՍ) ընդունված են ստանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման բնագավառում համաձայնեցված քաղաքականության վարման համաձայնագրին միացած Անկախ Պետությունների Համագործակցության (ԱՊՀ) անդամ երկրների կողմից: ԳՕՍՍ-երը ԱՊՀ-ում գործում են միջպետական ստանդարտների կարգավիճակով և ըստ էության համարվում են տարածաշրջանային բնույթի ստանդարտներ:

©SARM-Բոլոր իրավունքները պաշտպանված են

8.1.5 Տեխնիկատնտեսական և սոցիալական տեղեկատվության դասակարգիչները

8.1.5.1 Դասակարգիչները փաստաթղթեր են ստանդարտացման բնագավառում, որոնք տեխնիկատնտեսական և սոցիալական տեղեկատվությունը՝ ըստ դրա դասակարգման հատկանշների համակարգում են դասակարգման խմբերի (դասերի, տեսակների) և պարտադիր են կիրառման համար պետական տեղեկատվական համակարգերի ու տեղեկատվական պաշարների ստեղծման և տեղեկատվության միջգերատեսչական փոխանակման ժամանակ:

8.1.5.2 Տեխնիկատնտեսական և սոցիալական տեղեկատվության դասակարգիչների մշակումը, հաստատումը, վարումը և կիրառումն իրականացվում են ստանդարտացման ազգային համակարգի պահանջներին համապատասխան:

8.1.5.3 Միջազգային, միջպետական կամ այլ պետությունների դասակարգիչները կարող են կիրառվել Հայաստանի Հանրապետությունում՝ ստանդարտացման ազգային համակարգի պահանջներին համապատասխան: Միջազգային, միջպետական կամ այլ պետությունների դասակարգիչները կարող են կիրառվել Հայաստանի Հանրապետությունում՝ ՀԱՍ 6.01.1 ստանդարտով սահմանված կարգով:

8.1.5.4 Տեխնիկատնտեսական և սոցիալական տեղեկատվության դասակարգիչներն ու դրանց փոփոխությունները ենթակա են լիազորված պետական մարմնի կողմից հաստատման և պետական գրանցման:

8.1.5.5 Դասակարգիչների մշակումը, ընդունումը, վարումը և կիրառումը իրականացվում է ՀԱՍ 6.01.2 ստանդարտով սահմանված կարգով, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերի:

8.1.5.6 Դասակարգիչները և դրանցում փոփոխությունները ենթակա են պետական գրանցման Ստանդարտացման ազգային մարմնում՝ ՀԱՍ 6.01.1 ստանդարտին համապատասխան, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

8.1.6 Կազմակերպության ստանդարտները

8.1.6.1 Կազմակերպության ստանդարտները մշակում և հաստատում են իրավաբանական անձինք, ինչպես նաև գիտատեխնիկական, ինժեներական, հասարակական և այլ կազմակերպությունները՝ ելնելով սույն ստանդարտի 4-րդ բաժնի պահանջների կատարման, ինչպես նաև արտադրության կազմակերպման և կատարելագործման նպատակով դրանց կիրառման անհրաժեշտությունից:

8.1.6.2 Կազմակերպության ստանդարտները չպետք է հակասեն տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջներին:

8.1.6.3 Կազմակերպության ստանդարտները մշակվում են տվյալ կազմակերպության աշխատանքների կազմակերպման, կազմակերպության նպատակների համար արտադրվող արտադրանքի, կատարվող աշխատանքների (գործընթացների), մատուցվող ծառայությունների նորմերի և պահանջների սահմանման նպատակներով:

ՀԱՏ 1.0-2013

Մատակարարման ենթակա արտադրանքի համար կազմակերպության ստանդարտներ չեն մշակվում:

8.1.6.4 Կազմակերպության ստանդարտների մշակման, հաստատման, հաշվառման, փոփոխությունների կատարման և չեղյալ հայտարարման պահանջները սահմանում են կազմակերպությունները՝ ՀԱՏ 1.4 ստանդարտին համապատասխան:

8.1.6.5 Կազմակերպության ստանդարտները պետական գրանցման ենթակա չեն:

9 Նորմատիվ փաստաթղթերի կիրառումը

9.1 Նորմատիվ փաստաթղթեր ընտրելու և կիրառելու պատասխանատվությունն ընկնում է այն օգտագործողի վրա: Ընդհանուր առմամբ Ստանդարտների ազգային ինստիտուտը ի վիճակի չէ օժանդակելու այս առումով (և դրա համար որևէ պատասխանատվություն չի կրում) և կարող է միայն տրամադրել տեղեկատվություն նորմատիվ փաստաթղթի կիրառման ոլորտի և բովանդակության վերաբերյալ: Որոշ դեպքերում Ստանդարտների ազգային ինստիտուտը կարող է հրատարակել ուղեցուցային փաստաթղթեր որոշակի ստանդարտի կամ ստանդարտների խմբի կիրառման վերաբերյալ:

Նորմատիվ փաստաթղթերը մշակվում են ակնկալիքով, որ օգտագործողները կունենան համապատասխան փորձ, որակավորում և անհրաժեշտ միջոցներ, նորմատիվ փաստաթղթերը կկիրառեն բարեխղճորեն, և, եթե անհրաժեշտ է, խորհրդատվության համար կդիմեն համապատասխան որակավորում ունեցողներին:

9.2 Ստանդարտների մեկնաբանման պատասխանատվությունն ընկնում է այն օգտագործողի վրա, որն անհրաժեշտության դեպքում կարող է դիմել համապատասխան փորձագետներին: Ստանդարտների ազգային ինստիտուտը ստանդարտների անհատական մեկնաբանում չի իրականացնում, սակայն ցանկացած երկիմաստության, հակասության կամ հնարավոր սխալների դեպքում քննարկում է ստանդարտի համար պատասխանատու տեխնիկական հանձնաժողովների միջոցով՝ ստանդարտում համապատասխան փոփոխություն կատարելու համար: Նման փոփոխությունները նպաստում են փաստաթղթի արդիականության պահպանմանը:

9.3 Նորմատիվ փաստաթղթերի կիրառումը որոշվում է իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի կողմից՝ արտադրանքի մշակման, արտադրման, իրացման, օգտագործման (շահագործման), պահման, փոխադրման, օգտահանման, ինչպես նաև աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման փուլերում:

9.4 Նորմատիվ փաստաթղթի գործարկման թվականը սահմանում են դրա հաստատման վերաբերյալ հրամանով՝ հաշվի առնելով նորմատիվ փաստաթղթի գործողության մեջ դնելու համար անհրաժեշտ պայմանների և տեխնիկական միջոցների ապահովման ժամկետները:

9.5 Նոր մշակված կամ վերանայված ազգային ստանդարտները թույլատրվում է չտարածել այն արտադրանքի վրա, որի թողարկումն իրականացվել է մինչև դրանց գործարկումը, որը պետք է նախատեսված լինի այդ ստանդարտներով:

©SARM-Բոլոր իրավունքները պաշտպանված են

9.6 Պատվիրատուն և կատարողը պայմանագրում նախատեսում են ազգային ստանդարտների անվտանգության պահանջներին արտադրվող արտադրանքի, կատարվող աշխատանքի և մատուցվող ծառայության համապատասխանության, ինչպես սպառողներին թյուրիմացության մեջ գցող գործոնների կանխարգելման պայմանը:

9.7 Հայաստանի Հանրապետության տարածքում արտադրված արտադրանքի արտահանման համար իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը նորմատիվ փաստաթղթերի կիրառման անհրաժեշտությունը որոշում են իրենց կողմից կնքված պայմանագրերով՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերը:

9.8 Հայաստանի Հանրապետության նորմատիվ փաստաթղթերը կարող են կիրառել այլ պետությունների իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը՝ համագործակցության մասին համապատասխան համաձայնագրերի (պայմանագրերի) հիման վրա կամ այդ փաստաթղթերն ընդունած Հայաստանի Հանրապետության համապատասխան մարմինների, կազմակերպությունների թույլտվությամբ:

Հայաստանի Հանրապետության ազգային ստանդարտները որպես միջպետական ստանդարտ կիրառման կարգը սահմանված է ՀԱՍ 1.11 ստանդարտով:

9.9 Միջպետական ստանդարտների կիրառման կարգը

9.9.1 Միջպետական ստանդարտները, որոնց միացել է Հայաստանի Հանրապետությունը, և դրանց փոփոխությունները կիրառվում են Հայաստանի Հանրապետությունում առանց վերաձևակերպման, գործողության մեջ դրվելով ստանդարտացման ազգային մարմնի հրամանով՝ ազգային ստանդարտի կարգավիճակով:

Նույն ստանդարտացման օբյեկտի վրա տարածվող նույնանման ազգային ստանդարտի առկայության դեպքում՝ միջպետական ստանդարտը գործողության մեջ դնելու պահից գործող ազգային ստանդարտը չեղյալ է հայտարարվում:

9.9.2 Եթե Հայաստանի Հանրապետության ազգային ստանդարտն ընդունվել է որպես միջպետական ստանդարտ, ապա նախկինում մշակված նորմատիվ և տեխնիկական փաստաթղթերում այդ ազգային ստանդարտի վկայակոչումները պահպանվում են այն արտադրանքի համար, որի թողարկումն իրականացվել է մինչև համապատասխան միջպետական ստանդարտը գործողության մեջ դնելը:

Ընդ որում, ազգային ստանդարտում կատարվում է փոփոխություն, որտեղ նշվում է, որ այն շարունակում է գործել նախկինում մշակված արտադրանքի նկատմամբ՝ մինչև վերջինիս արտադրությունից հանվելը, իսկ նոր մշակումների համար չի կիրառվում:

Այն միջպետական ստանդարտների մշակման և կիրառման կարգը, որոնց մշակողը Հայաստանի Հանրապետությունն է կամ ստանդարտացման միջպետական տեխնիկական հանձնաժողովները, որոնց քարտուղարությունների վարումը դրված է Հայաստանի Հանրապետության վրա, սահմանված է ՀԱՍ 1.11 ստանդարտով:

ՀԱՏ 1.0-2013

9.10 Միջազգային, տարածաշրջանային և այլ պետությունների ազգային ստանդարտների կիրառման կարգը

9.10.1 Միջազգային, տարածաշրջանային և այլ պետությունների ազգային ստանդարտները, ինչպես նաև կանոնները և հանձնարարականները իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի կողմից կարող են կիրառվել համագործակցության մասին միջազգային համաձայնագրերի (պայմանագրերի) հիման վրա կամ համապատասխան տարածաշրջանային կազմակերպությունների և ստանդարտացման ազգային մարմինների թույլտվությամբ, եթե դրանցով սահմանված պահանջները չեն հակասում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջներին:

9.10.2 Միջազգային և տարածաշրջանային ստանդարտները (դրանց Հայաստանի Հանրապետության միանալու դեպքում), ինչպես նաև այլ պետությունների ազգային ստանդարտները (այդ պետությունների հետ համապատասխան համաձայնագրերի առկայության դեպքում) Հայաստանի Հանրապետության տարածքում կիրառում են որպես ազգային ստանդարտներ:

Միջազգային և տարածաշրջանային ստանդարտների կիրառման կարգը սահմանված է ՀԱՏ 1.6 ստանդարտով:

Միջազգային (տարածաշրջանային) կանոնների և ուղեցույցների կիրառման կարգը սահմանված է միջազգային ուղեցույցով:

9.10.3 Եթե միջազգային, տարածաշրջանային և այլ պետությունների ազգային ստանդարտի հիման վրա ձևակերպված ազգային ստանդարտում վկայակոչված են նախկինում արդեն որպես ազգային ստանդարտ կիրառված կամ իրենց պահանջներով համապատասխան ազգային ստանդարտներին համանման ստանդարտներ, ապա այդ ստանդարտի հիման վրա ձևակերպվող Հայաստանի Հանրապետության ազգային ստանդարտում վկայակոչվում են այդ ազգային ստանդարտները:

9.10.4 Եթե կիրառման ենթակա միջազգային, տարածաշրջանային և այլ պետությունների ազգային ստանդարտում վկայակոչվում են նախկինում Հայաստանի Հանրապետությունում չկիրառված ստանդարտներ և համանման ազգային ստանդարտի բացակայության դեպքում, մինչև դրա կիրառումը պետք է լուծել այդ ստանդարտների կիրառման հարցը:

9.10.5 Գիտատեխնիկական և ինժեներական ընկերությունների ստանդարտները, այլ պետությունների ֆիրմաների տեխնիկական պայմաններն ու ստանդարտները կիրառվում են համագործակցության մասին համապատասխան համաձայնագրերի (պայմանագրերի) հիման վրա կամ այդ փաստաթղթերը հաստատած համապատասխան մարմինների, կազմակերպությունների թույլտվությամբ, եթե այդ փաստաթղթերով սահմանված պահանջները չեն հակասում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը:

9.10.6 Միջազգային, տարածաշրջանային և այլ պետությունների ազգային ստանդարտների ու այլ պետությունների ֆիրմաների ստանդարտների պահանջներին համապատասխան

©SARM-Բոլոր իրավունքները պաշտպանված են

արտադրանքի պատրաստումն ու արտահանումը հնարավոր է այդ երկրների սպառողի (պատվիրատուի) պահանջով՝ պայմանագրերի (համաձայնագրերի) հիման վրա:

10 Տեղեկատվություն նորմատիվ փաստաթղթերի մասին, դրանց հրատարակումը և իրացումը

10.1 Մշակվող և ընդունված ազգային ստանդարտների, դասակարգիչների, ինչպես նաև արտադրանքի և ծառայության գրանցված տեխնիկական պայմանների, միջազգային, տարածաշրջանային և միջպետական ստանդարտների, ստանդարտացման բնագավառի կանոնների, նորմերի և հանձնարարականների, այլ պետությունների ազգային ստանդարտների, ստանդարտացման բնագավառում միջազգային պայմանագրերի և դրանց կիրառման կանոնների մասին տեղեկատվությունը, ինչպես նաև նշված փաստաթղթերը օգտվողներին, այդ թվում արտասահմանյան, մատչելի դարձնելու համար ստանդարտների ազգային ինստիտուտը կազմակերպում է այդ փաստաթղթերի պաշտոնական տեղեկատվության հրապարակում:

10.2 Նորմատիվ փաստաթղթերի կենտրոնացված հաշվառման, պահման և դրանց վերաբերյալ տեղեկատվության ապահովման նպատակով ստանդարտների ազգային ինստիտուտը, համագործակցելով պետական մարմինների, իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի, ինչպես նաև միջազգային, տարածաշրջանային և այլ պետությունների ստանդարտացման կազմակերպությունների հետ, ստեղծում և վարում է նորմատիվ փաստաթղթերի ազգային ֆոնդ:

10.3 Նորմատիվ փաստաթղթերի ազգային ֆոնդը համալրվում է.

- ազգային ստանդարտներով,
- դասակարգիչներով,
- ստանդարտացման միջազգային, տարածաշրջանային, միջպետական պայմանագրերով, որոշումներով, հրահանգներով, հանձնարարականներով, ինչպես նաև միջազգային, տարածաշրջանային, միջպետական և այլ պետությունների ստանդարտներով և ստանդարտների նախագծերով,
- տեխնիկական պայմաններով,
- ստանդարտացման, չափումների միասնականության ապահովման ազգային համակարգերի և համապատասխանության հավաստման համակարգի ստանդարտներով և նախատեսված կանոններով:

10.4 Ստանդարտների ազգային ինստիտուտում ստեղծված է և գործում է տեղեկատվական միասնական համակարգ, որը նորմատիվ փաստաթղթերի ֆոնդում եղած փաստաթղթերի վերաբերյալ տեղեկատվությունը պարբերաբար հրապարակում է իր տեղեկատվական հրատարակություններում:

10.5 Ազգային ստանդարտների և դրանց փոփոխությունների հրատարակման իրավունքը պատկանում է ստանդարտների ազգային ինստիտուտին:

ՀԱՍ 1.0-2013

10.6 Ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի մասին տեղեկատվությունը և միջազգային, տարածաշրջանային, միջպետական, Հայաստանի Հանրապետության և այլ պետությունների ազգային ստանդարտների տրամադրումը իրականացնում է ստանդարտների ազգային ինստիտուտը՝ պայմանագրային հիմունքներով:

10.7 Տեխնիկական պայմանների տրամադրման բացառիկ իրավունքը պատկանում է այդ փաստաթղթերի բնօրինակը տնօրինողին:

10.8 Կազմակերպության ստանդարտների մասին տեղեկատվությունը և դրանց տրամադրումն իրականացնում են այդ փաստաթղթերը հաստատող կազմակերպությունները:

11 Ստանդարտացման բնագավառում միջազգային համագործակցությունը

11.1 Ստանդարտների ազգային ինստիտուտը ներկայացնում է Հայաստանի Հանրապետությունը ստանդարտացման միջազգային կամ տարածաշրջանային կազմակերպություններում:

11.2 Ստանդարտացման բնագավառում միջազգային համագործակցության հիմնական խնդիրներն են.

- ստանդարտացման ազգային համակարգի ներդաշնակեցումը միջազգային, տարածաշրջանային և այլ պետությունների ստանդարտացման համակարգերի հետ,

- ազգային ստանդարտների՝ հատկապես համապատասխանության գնահատման նպատակների համար կիրառվող, ներդաշնակեցումը միջազգային, տարածաշրջանային և այլ պետությունների ազգային ստանդարտների հետ,

- Հայաստանի Հանրապետության ստանդարտների հիման վրա միջազգային և տարածաշրջանային ստանդարտների մշակումն արտադրանքի և տեխնոլոգիայի մրցունակ տեսակների համար, այդ թվում՝ ստեղծված երկկողմանի և բազմակողմանի համագործակցության արդյունքում,

- արտադրանքի որակի և համաշխարհային շուկայում դրա մրցունակության բարձրացումը,

- այլ պետությունների հետ Հայաստանի Հանրապետության առևտրատնտեսական և գիտատեխնիկական համագործակցության նորմատիվ ապահովման բարելավումը և աշխատանքի միջազգային բաժանմանը Հայաստանի Հանրապետության մասնակցությունը,

- այլ պետությունների հետ փոխգործողության ժամանակ չափումների միասնականության ապահովումը,

- միջազգային և տարածաշրջանային ստանդարտների մշակման ժամանակ Հայաստանի Հանրապետության շահերի պաշտպանության ապահովումը,

- միջազգային, տարածաշրջանային և այլ պետությունների ազգային ստանդարտների կիրառման և գիտատեխնիկական առաջընթացի նվաճումների առավելագույնս օգտագործման հիման վրա նորմատիվ փաստաթղթերի ֆոնդի կատարելագործումը:

11.3 Ստանդարտացման բնագավառում միջազգային համագործակցությունն իրականացվում է ստանդարտացման միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների, ինչպես նաև այլ պետությունների համապատասխան կազմակերպությունների հետ երկկողմանի և բազմակողմանի համագործակցության վերաբերյալ պայմանագրերի (համաձայնագրերի), արձանագրությունների և այն պարտավորությունների հիման վրա, որոնք բխում են ստանդարտացման միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների գործունեությանը Հայաստանի Հանրապետության մասնակցությունից:

11.4 Ստանդարտացման միջազգային կազմակերպությունների գծով Հայաստանի Հանրապետության միջազգային համագործակցությունը ներառում է նրա անմիջական մասնակցությունն այդ կազմակերպությունների աշխատանքներին, առաջին հերթին՝ մասնակցությունը միջազգային և տարածաշրջանային ստանդարտների, միջազգային կազմակերպությունների կանոնների ու հանձնարարականների մշակմանը, ինչպես նաև տնտեսությունում և գործընկեր պետությունների հետ պայմանագրային-իրավական հարաբերություններում դրանց կիրառման ապահովումը:

Ստանդարտացման բնագավառում երկկողմանի կամ բազմակողմանի համագործակցությունը ներառում է Հայաստանի Հանրապետության ազգային ստանդարտների ներդաշնակեցումը գործընկեր պետությունների ազգային ստանդարտների հետ, ստանդարտների համատեղ մշակումը, համատեղ գիտական հետազոտությունների կատարումը, փորձի և տեղեկատվության փոխանակումը, փոխադարձ խորհրդատվությունները, կադրերի ուսուցումը և այլն:

11.5 Ստանդարտացման բնագավառում միջազգային համագործակցության կազմակերպումն ու իրագործումը կատարվում են ստանդարտացման ազգային մարմնի կողմից սահմանված կարգով՝ հաշվի առնելով ստանդարտացման միջազգային կազմակերպության (ԻՍՕ), միջազգային էլեկտրատեխնիկական հանձնաժողովի (ԻԷԿ), առևտրի համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ), ստանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման միջպետական խորհրդի, ստանդարտացման միջազգային ու տարածաշրջանային այլ կազմակերպությունների կողմից ընդունված մեթոդական փաստաթղթերը, ինչպես նաև գործընկեր պետությունների հետ Հայաստանի Հանրապետության երկկողմանի գիտատեխնիկական համագործակցության աշխատանքների կատարման պայմանագրերով:

Մատենագիտություն

«Հայաստանի Հանրապետությունում ստանդարտացման լիազորված մարմին ու ստանդարտացման ազգային մարմին ճանաչելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի հուլիսի 22-ի N 1038-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հուլիսի 4-ի N 883-Ն որոշում

«Ստանդարտացման մասին» 2012 թ. մարտի 5-ի ՀՕ-21-Ն Հայաստանի Հանրապետության օրենք (2013 թվականի մայիսի 25-ի ՀՕ-40-Ն ՀՀ օրենքի փոփոխություններով)

ԿՆ 1.1-2005 Ստանդարտացման կանոններ. Ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովների հիմնադրման և գործունեության կարգը

ԲՍ 0:2011 Ստանդարտ ստանդարտների համար. Ստանդարտացման սկզբունքները (BS 0:2011 A standard for standards – Principles of standardization)

ԻՍՕ/ԻԷԿ Գայդ 21-2 Միջազգային ստանդարտների և այլ միջազգային հանձնարարականների տարածաշրջանային կամ ազգային ընդունումը. Մաս 2. Միջազգային ստանդարտից տարբերվող այլ միջազգային հանձնարարականների ընդունումը (ISO/IEC Guide 21-2 Regional or national adoption of International Standards and other International Deliverables – Part 2: Adoption of International Deliverables other than International Standards)

Հանգուցային բառեր. ստանդարտացում, հիմնական դրույթներ, ստանդարտացման նպատակ, ստանդարտացման սկզբունք, ստանդարտացման նորմատիվ փաստաթուղթ, ստանդարտի տեսակ, միջազգային համագործակցություն, ստանդարտի կիրառում

ՍԴ 01.120

Գինը սահմանվում է 24 էջի համար
